



ՄՈՒՐԲ ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍԱՏ ՄԱՅՐ Ե՛ ԿԵՂԵՅԻ

ԽԱՉԱԵՐԱՅԷՆ ԵՏԲ ՈՒԹԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ
10 ՆՈՅԵՄԲԵՐ 2024

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (24.1-14)

Ահա Տէրը պիտի կործանէ եւ աւերէ ամբողջ աշխարհը, տակնուվրայ պիտի ընէ աշխարհը եւ պիտի ցրուէ անոր բնակիչները: Ա՛լ կարելի պիտի չըլլայ զանազանել ո՛րն է աշխարհականը եւ որը՝ քահանան, ո՛վ է ծառան եւ ով՝ տէրը, կամ ո՛վ է աղախինը եւ ով՝ տիկինը, ո՛վ է գնողը եւ ով՝ ծախողը, ո՛վ է փոխ տուողը եւ ով՝ փոխ առնողը, ո՛վ է պարտատէրը եւ ով՝ պարտապանը: Երկիրը ամբողջութեամբ պիտի կործանի, պիտի յափշտակուի եւ աւարուի,– ահա Տէրը ինք այս բաները կը յայտարարէ.– Երկիրը իր կործանումը կը սգայ, աշխարհը՝ իր կործանումն ու աւերը. աշխարհի ղեկավարները նոյնպէս կը սգան, որովհետեւ աշխարհը անօրէն մարդոցմով լեցուեցաւ, որոնք Տիրոջ Օրէնքը ոտնակոխ ըրին, անոր պատուիրանները փոխեցին եւ անոր հետ կնքուած յաւիտենական Ուխտը չյարգեցին: Այդ իսկ պատճառով Աստուծոյ նզովքը պիտի հարուածէ երկիրը, որովհետեւ անոր բնակիչները մեղանջեցին. մարդիկ թշուառութեան պիտի մատնուին, եւ շատ քիչ պիտի ըլլան հարուածէն ազատածները: Գինին խմող պիտի չունենայ, այգին՝ քաղող, խրախճանքը հառաչանքի պիտի փոխուի, ուրախ թմբուկները

պիտի լռեն, անբարիչ տներու սնապարծութիւնն ու հարստութիւնը վերջ պիտի գտնեն, քնարներու ձայնը պիտի դադրի: Մարդիկ ամօթով պիտի մնան, գինին պիտի չկարենայ զիրենք ուրախացնել, եւ օղին լեղի պիտի թուի խմողներուն: Ահա բոլոր քաղաքները աւերուեցան, տուներու դռները փակ մնացին, որովհետեւ ներս մտնող չկայ: Ամենուրեք գինիի փոխարէն ողբ կայ, ցնծութեան ձայները լռեցին, ուրախութիւնը մարդոցմէ փախաւ: Քաղաքները ամայացան, տուները լքուած մնալէն կործանեցան: Այո՛, Տէրը այսպէս պիտի վարուի աշխարհի բոլոր ժողովուրդներուն հետ. ինչպէս մարդիկ ձիթենին կը թօթուեն, այնպէս Տէրը պիտի թօթուէ զիրենք, եւ իրենցմէ ինկածները պիտի աղաղակեն ու ողբան: Բայց երկրի վրայ մնացողները միասնաբար պիտի ուրախանան Տիրոջ փառքով:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՓԵՍԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (5.15-33)

Հետեւաբար ձեր ապրելակերպին ուշադրութիւն ըրէք: Մի՛ ապրիք անմտօրէն, այլ իմաստուններու պէս: Օգտագործեցէ՛ք ժամանակը, որովհետեւ այս օրերը չար են: Ուստի անմտութիւն մի՛ ընէք. հասկցէք թէ

ի՛նչ կ'ուզէ Տէրը ձեզմէ: Գերին մի՛ դառնաք գինիին որ անառակութեան կը տանի. այլ մասնաւորաբար Սուրբ Հոգիով լեցուեցէք, իրարու հետ սաղմոսներով, օրհնութիւններով ու հոգեւոր երգերով խօսեցէք, եւ ձեր սիրտերուն մէջ միշտ երգեցէք ու սաղմոս ըսէք Տիրոջ: Տեւաբար, ամէն բանի համար շնորհակալութիւն յայտնեցէք Հօր Աստուծոյ, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի անունով:

Քրիստոսի հանդէպ ձեր պատկառանքը արտայայտեցէք՝ իրարու հնազանդելով: Կինե՛ր, հնազանդեցէ՛ք ձեր ամուսիններուն, ինչպէս Տիրոջ պիտի հնազանդէիք. որովհետեւ ամուսին մը իր կնոջ գլուխն է, այնպէս ինչպէս Քրիստոս գլուխն է եկեղեցիին՝ իր մարմին, որուն փրկիչն է ինք: Հետեւաբար, ինչպէս եկեղեցին Քրիստոսի կը հնազանդի, այնպէս ալ կիները ամէն բանի մէջ իրենց ամուսիններուն թող հնազանդին:

Այրե՛ր, սիրեցէ՛ք ձեր կիները այնպէս՝ ինչպէս Քրիստոս սիրեց եկեղեցին եւ իր կեանքը տուաւ անոր համար, որպէսզի ջուրի լուացումով զայն մաքրէ եւ իր խօսքով սրբէ, այնպէս մը՝ որ եկեղեցին իրեն ներկայանայ ամբողջական փառքով, առանց որեւէ արատի կամ խորշոմի կամ ուրիշ թերութեան, այլ ըլլայ սուրբ եւ անարատ: Ծիշդ նոյն ձեւով ամուսիններ պարտին իրենց կիները սիրել որպէս իրենց մարմինը. որովհետեւ իր կինը սիրողը ինքզինք սիրած կ'ըլլայ, եւ չկայ մէկը որ ինքզինք ատէ. ամէն մարդ ալ կը սնուցանէ եւ կը խնամէ իր մարմինը, ինչպէս Քրիստոս կը սնուցանէ ու կը խնամէ եկեղեցին՝ իր մարմինը, որուն անդամներն ենք բոլորս, անոր մարմինէն ու ոսկորներէն:

Սուրբ Գիրքին մէջ գրուած է. «Ահա այս պատճառով այրը պիտի թողու իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միացայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան»: Մեծ խորհուրդ մը ունի իր մէջ այս խօսքը, որ ես Քրիստոսի եւ եկեղեցիին համար ըսուած կը կարծեմ: Բայց նոյնը կը վերաբերի նաեւ ձեզմէ իւրաքանչիւրին, որովհետեւ իւրաքանչիւր այր պէտք է իր կինը սիրէ իր անձին պէս, եւ ամէն կին պէտք է յարգէ իր ամուսինը:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

(8.49-56)

Մ ինչ Յիսուս կը խօսէր, ժողովրդապետին տունէն մէկը եկաւ եւ իրեն ըսաւ. «Աղջիկդ մեռաւ, այլեւս մի՛ յոգնեցներ վարդապետը»: Յիսուս ասիկա լսելով, ըսաւ ժողովրդապետին. «Մի՛ վախնար, միայն հաւատա՛ եւ աղջիկդ պիտի ապրի»:

Երբ Յիսուս ժողովրդապետին տունը հասաւ, չձգեց որ ոեւէ մէկը ներս մտնէ՝ բացի Պետրոսէն, Յակոբոսէն, Յովհաննէսէն եւ աղջկան հօրմէն ու մօրմէն: Ներս գտնուողները բոլորն ալ կու լային ու կ'ողբային: Յիսուս ըսաւ անոնց. «Մի՛ լաք. աղջիկը մեռած չէ, այլ կը քնանայ»: Անոնք գինք կը ծաղրէին, որովհետեւ գիտէին որ աղջիկը մեռած է: Յիսուս բոլորն ալ դուրս հանեց, բռնեց աղջկան ձեռքէն եւ բարձրաձայն ըսաւ. «Ո՛վ փոքրիկ, ոտքի՛ ել»: Անմիջապէս անոր հոգին վերադարձաւ եւ ոտքի կանգնեցաւ: Ապա Յիսուս հրամայեց որ ուտելիք տան աղջկան, մինչ ծնողքը ապշահար եղած էր: Յիսուս անոնց պատուիրեց որ պատահածին մասին ոեւէ մէկուն բան չըսեն:

Անդրադարձներ եւ Խորհրդածութիւններ

Պօղոս առաքեալ մարդկային կրօնական փորձառութեան ակնարկելով՝ գրած է. «Որքան ատեն որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ուժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք: Բայց հիմա յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած աշխարհի դրկեց իր Որդին, որ (...) Օրէնքին տակ ապրեցաւ, որպէսզի մեզ Օրէնքին գերութենէն փրկէ եւ Աստուծոյ որդիներ դարձնէ», Գղ 4.3-4, 5 (Նոր Աշխարհաբար Թարգմանութիւն, ՆԱԹ):

Մէջբերուածին համար ըսեմ, որ յունարէն բնագիրը, ինչպէս նաեւ գրաբար թարգմանութիւնը չունին «յարմար ժամանակը հասած համարելով» նախադասութիւնը: Յունարէն բնագիրը՝ թարգմանաբար. «Ի դէպ, երբ ժամանակին լրումը հասաւ», իսկ գրաբարը՝ «իբրեւ եկն լրումն ժամանակին»: Ինչպէս ակնյայտ է բնագիրն ու գրաբարը ՆԱԹի ըսածէն ուրիշ բան կ'ըսեն: Արդ, ըստ անոնց՝ կարելի է վերատեսութեան ենթարկել մէջբերուածը, եւ կարդալ՝ «Այնքան ժամանակ որ հոգեւորապէս անչափահաս էինք՝ բնութեան ուժերուն կ'ենթարկուէինք ու կը ծառայէինք: Բայց երբ ժամանակը իր լրումին հասաւ՝ Աստուած աշխարհի դրկեց իր Որդին եւ այլն»:

Թարգմանական այս խնդրին նկատառումէն յետոյ՝ կարելի է մտածել, թէ առաքեալը կրօ-

նական փորձառութեան երկու տեսողութիւն ճանչցած է. անչափահասութեան տեսողութիւն եւ չափահասութեան տեսողութիւն: Նախքան Քրիստոս՝ անչափահասութեան տեսողութիւնն է, յետ ու ընդ Քրիստոսի՝ չափահասութեան տեսողութիւնը:

Կարելի է հարց տալ՝ թէ «նախքան»ը եւ «յետ»ը պատմական ժամանակի՝ կը վերաբերին, թէ ներքին կամ հոգեւոր ժամանակի: Անկասկած՝ ներքին: Ներքին ժամանակն է, որ կը կոչեն «տեսողութիւն»: Արդարօրէն դիտել տրուած է, թէ քրիստոնէական տեսողութիւնը անպայման եւ միշտ չափահասութեան տեսողութիւն չէ: Քրիստոնէականին մէջ ալ աղաւաղուած գաղափարներ, միտքեր, իտէլաներ եւ հաւատալիքներ երեւցած են ու կ'երեւնան: Այս միտքն է, որ կը թելադրուի՝ երբ ճաշու ընթերցումով կը մատուցուի քաղուածք մը, որուն հասցէն գաղատացիներն էին, իսկ այժմ՝ եկեղեցւոյ մէջ ժողովեալներ: Արդ, քրիստոնէական խորութիւնը՝ անպայման ներքին կամ հոգեւոր չափահասութեան ունկնդրութիւն մը չէ: Քաղուածքը նաեւ ըսել կ'ուզէ, թէ ժամանակին լրումը կը հասնի այն ատեն, երբ ներքին տեսողութիւնը իր մէջ կ'ընդունի աստուածառար Որդին, ան՝ որ Աստուծոյ զօրութիւնը եւ իմաստութիւնն է իր Ս. Խաչին նշանով:





ՈՂՈՐՄՈՒԹԵԱՆ ԿԱՆՉ ՄԸ ԱՊՈԹՔԱՆԵՐ ԾԷՆՈՒՄԷՆ

ՀԵՊԻՆԱԿ՝ ՀԷՆՐԻ ՆՈՒԸՆ

ԹԱՐԳԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՐՕ ՍՐԿ. ՆՈՒՈՒՏԵԱՆԻ

ՔՈՒԿԴ

Քաղցր Տէր, օգնէ որ աչքերս վրադ սեւեռած պահեմ: Դուն մարմնացումս ես Աստուածային Սիրոյ, արտայայտութիւնս ես՝ Աստուծոյ անսամիան կարեկցութեան, տեսանելի յայտնաբերումը՝ Հօր սրբութեան: Դուն գեղեցկութիւն, բարութիւն, հեգութիւն, ներողամտութիւն եւ ողորմութիւն ես: Բոլորը

տեսանելի են մէջդ: Քեզմէ դուրս ոչինչ գտանելի է: Ինչո՞ւ ուրիշ տեղ փնտռեմ կամ երթամ:

Դուն յաւիտենական կեանքի խօսքեր ունիս, դուն ճաշակելիք ես եւ՝ ըմպելիք, ճանապարհն ես, ճշմարտութիւնն ու Կեանքը: Լոյսն ես՝ որ խաւարին մէջ կը փայլի, լապտերը՝ լապտերակալին վրայ, տունը՝ լեռան վրայ: Աստուծոյ կատարեալ Պատկերն ես: Մէջդ ու միջոցաւդ կրնամ տեսնել Երկնաւոր Հայրը, եւ հետոյ է որ կրնամ գտնել՝ Երրորդութեան տանող ճամբան: Ով Սուրբդ, Գեղեցիկդ, Փառաւորդ, եղիր Տէրս, Ազատարարս, Փրկիչս, Ուղեկս, Մխիթարիչս, Սփոփիչս, Յոյսս, Խնդութիւնս ու Խաղաղութիւնս:

Քեզի կ'ուզեմ տալ ամբողջութիւնը որ եմ: Թող առատաձեռն ըլլամ, ոչ՝ ազահ կամ տատամսոյ: Թող ամեն ինչ նուիրեմ - ամեն ինչ որ ունիմ, կը մտածեմ, կ'ընեմ եւ կը զգամ: Ամբողջը Քուկդ է, ով Տէր: Կը խնդրեմ, որ ընդունիս եւ լրիւ սեփականացնես: Ամեն:

(Շար. 26)



Տեղեկատու

Սիրելի ընթերցողներ,

լոյս տեսաւ «Կանթեղ» տեղեկատու թիւ 3՝

Հոկտեմբեր/Նոյեմբեր/Դեկտեմբեր ամիսներուն համար:

Կրնաք գայն ստանալ եկեղեցւոյ մուտքին: